

լրացնելով, յագեցնում է բանաւորի ազահութիւնը և 8. Գէորգին աղասելով, մեծ պատիւնք է տալիս: Հիւրասիրում է: փառքով ճանապարհ է գնում զեսի Քուին. այդ ժամանակ էր, որ Տէր Գէորգ կամենում էր պատժել Աղուանից նոր կաթողիկոսին՝ Յովնանին. Համամ բարեխօս է հանգիսանում Յովնանի մասին և մեծ հայրապետը: Համամի երախտիքն առ ինքն յարգելով, ներում է Յովնանին: Երեւ եղայրասպան ոմն՝ Համամ թագաւորն աշխատում է բարի գործերով քաւել իւր ոճիրը. եկեղեցիներին նուերներ է տալիս և չքաւորներին ողորմութիւններ է բաժանում: Ապա, մնապէս երևում է: Յուսուփ ոստիկանի ծանր և առնագործն Հարուածների ժամանակ Համամ թագաւորն ընտրում է մենակեցութիւն և ընդունում կրօնաւորի սքեմ: փոխելով իւր անունն Յոհաննէս: Այս կոչման մէջ և նուերում է նա իւր ժամանակը գրաւոր պարապմունքների: Նորա զրուածքներից

երկուսի հետ ծանօթացանք արգէն. մէկը շարականն է և միւսը Սողոմոնի Առակաց մեկնութիւնը: Դոցանից զատ նա գրել է Ամենայի, Ճմբ. Սաղմանի և Սաղմոսաց վերջին օրհնութիւնների մեկնութիւնները: Հայոց Պատմութիւն և քերականի վերլուծութիւն:

Հայոց նախնի մատենագրութեան մէջ, ի թիւս այլոց եղել են և թագակիր հեղինակներ, ինչպէս օրինակ վերջին Գագիկը, հեղինակներ և նախարարական ազնիւ տներից, ինչպէս է Գրիգոր Մագիստրոս և այլք ոմանք. Համամ Արևելցին այդպիսի գրագէտների կամասի մէջ իւր երկասիրութիւններով գրաւում է ոչ պակաս նշանաւոր տեղ: Յուսանքը որ բանասիրութիւնն հետղչետէ պարզէ այդ ընտիր հեղինակի բաղմակողմանի նշանակութիւնն, հանգէս բերելով նորա տակաւին անձանօթ գործերը:

լ. լ.

ՀԱՅԵՄ Ա. Ս. Ա. ԿՈ. Ն 8. Ա. Խ. Տ. Ա. Կ.
ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ԱԴԱԲԵՆԻՑ Մ. ԿԵԴ. ԵՒ ԳԻՐՔ ԹՎ. ԹԱՅ ԱՆԱԿԱՆՑԻ ԿԱԹՈՒՊ. ԿՈՍՏՈՒՄ.

(Եարուակութիւն և վերը)

Ա.

ՊԵՏՄՈՒԹԻՒՆ ԱԴԱԲԵՆԻՑ.

ի. Իսկ¹ գալուստ տաճկին ի հայս եւ դրաւել² զաշխարհն³ ընդ լծով ծառայութեամբ⁴ հարկաց թուականն⁵ Հայոց⁶ ՅԱՅԻ. (342) լիներ: Յորոյ ձեռն ըմբռնեալ լիներ⁷ Հայրապեան⁸ գեորգ⁹ ի կապանս երկաթի պարփակեալ ածաւ ի պարտաւ: Ա.

«Տէր Յունան Ը և կէս¹⁰ (ամ): Այ էր զիմա¹¹ եպիսկոպոս և առանց կամաց կաթողիկոսին գեորգայ զայ յԱզուանս: և աստէն ձեռնազրի: զոր նոյն ինքն գեորգ և զատ կըս ինքն ձեռնազրէ: ը.

1. Բ. պակասի իսկ: 2. Բ. գրաւելոյ: 3. Բ. զաշխարհ: 4. Բ. ծառայութեան: 5. Բ. զասաւորութեան: 6. Բ. ՅՈՒ. ՅՈՒ. ՅՈՒ: 7. Բ. Եղիս 8. Բ. Հայրապեան Հայոց: 9. Բ. գերգորին: 10. Բ. ՅՈՒՆԱՆԱԾ տես, Պատմ. Ազ. զիր գ. զլ. իւ: 91:

10. Բ. Տէր յունան ամս, Ը և կէս: Ն. օրինակում պակասի մշաւակութիւն յունան կաթուպիկոս մասին:

11. Բ. Եղիսա եպիսկոպոս Հայոց:

«Սոյն յասուածց Պատմ. Ազ. զիր գ. զլ. իւ: միայն այս զիւլով երկաթազրի օրինաւում նորողած և բոլորազրի թերթից է:

ԳԻՐՔ ԹՎ. ԹԱՅ.

ի. «Եւ եկաց ակեեաց այսպէս միով հաւանութեամբ զամս ։ ՃԼ. Հ. (137) զժամանակա ։ ՓՄ. (14) հայրապեալ՝ մինչև ցակը Գէորգ Հայոց կաթողիկոս:

— Իսկ ապա՝ զօրացեալ բոնութեանն իումայկացւոց՝ գերեցին զսուրբ կաթողիկոսն Հայոց:

— Իսկ ապա զրան եպիսկոպոսն զոյով նորին Յունան անուն¹ փախեաւ ապստամբողական կարգաւ: անկաւ յաշխարհն Ազուանից:

Ոչ զոյր Հայրապեա Հայոց որ յուսակնէնն ըստ սովորութեան՝ առնուլ ձեռնազրութիւն:

Խրե մեծահաւատութիւն իւրեանց Համարեալ և նշիք² զըրան եպիսկոպոս Հայրա-

1. Ա. Նորին յունանուն: Բ. Նորին Յունան անուն:

2. բ. Եւ Նշիք: Հաւանական ամ կարծում Միաբանի կարծիքը որ բառ Փշիկ կամ Ջպիկ յատուկ անուան աղաւաղումն է: Տես, Պատմ. Ազ. զիր գ. զլ. իւ: Սրբաւէր Քշիկ Ներսմինքի վանաց տանտէք: Երկորդ խորմ Բ. Սրբաւէր Քշիկ (ը. Քշիկ) Ներսմինքաց վանաց տանտէք, Ասու-

«Որբասէր Քշիկ Սեր. - Մեր հի¹² վանաց ամսուտեր¹³ բոլոր ուխտիւ իւրօվի որք անխառն յաղանգօյն պահեցան։ ¹⁴ ըստ դասաւորութեան միաբանի։

«Քշիկ ժողովիւալ զեպիսկոպոսունս աշխարհին Աղուանից՝ իրեւ մեծահաւատութիւն իւրեանց համարեալ զդրան եպիսկոպոս հայրապետին հայոց կարգեցին ինքեանց կաթողիկոս»։

«Ապա բարեպաշտն Համամ որ եւ աղուանից եղեւ թագաւոր, նոյնպէս զիործանեալ թագաւորութիւն¹⁵ առան¹⁶ Աղուանից Համամ¹⁸ նորոգէ¹⁹ որպէս Աշոռ Բագրատունի²⁰ զհայոց թագաւորութիւն։ ²¹ Այսք ի միում ժամանակի գրոծեցան։ Եւ նոյն ինքն Համամ սակս առ Աստուած մեծապէս²² յանցանացն որ վասն սնոսի այս²³ կենացս զպարտ արեան եղբաւըն²⁴ ժողով—

(Երկաթագիրն վերջանում է և բոլորագիր կարկատանն է սկսուում)»։

«Եալ յանձինն²⁵ իւրում մեծագործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարոտեալու²⁶ և չքաւորս առատազարդ²⁷ անսպառ կաարէր, որ և զմեծ հայրապետն հայոց գէորդ յանօրէն Աաջկայ կապարանէն բազմաբաշխ գանձիք տայր արձակել և յողնամեծար զնա արարեալ առողջ առ հայաստանս²⁸ առաքէր։

•Ը. «Տէր Աիմէռն ամն ։ ԻԱ. (21). Սա էր զրան եպիսկոպոս սուրբ Աթոռոցն, որ առաւել զարգարեաց սպասիւք զսուրբ²⁹ խաչն։

պետին Հայոց՝ ժողովիւալ զեպիսկոպոսունս աշխարհին Աղուանից՝ կարգեցին զնա ինքեանց կաթողիկոս։

«Եւ իրեւ շնորհեաց գերեզարձ Քրիստոս Հայրապետին հայոց Ծեառն Գէորգայ⁵ ի ձեռն զանձակնութեան տեառն Համամայ⁴ Աղուանից՝ արքայի։

Իսկ հայրապետն Աղուանից Յունան կոչեցեալն ընդ առաջ եղիւ տեառն Գէորգայ⁵ սիրալիր⁶ սրախիւ զերախտիսն յիշել Համամայ առ գերէփրկութեանն⁷ օճան, զոր տեսեալ Հայոց հայրապետին տեառն գէորգայ զեղեալսն զարմացաւ։ Եւ նոյն ժամայն հրամանն տայր կողոպտել զկարծեալ կրօնիցն։

Իսկ աստանօր յուշ արարեալ տեառն Համամայ զերախտիսն՝ համարեալ ապերախտ՝ և զպատճառն շնորհակալեացն օճան, անշնորհութեանն զայրանսցը։ Եւ զալիսս առաջի եղեալ հայլասպետին հայոց աղաչէր զՅունանն, որ առանց նորին կամացն էր, նորին հրամանաւ վերստին ձեռնազրել⁸ և խողով⁹ (?)

Իսկ նա առ հարկի՝ իրեւ մեծ իմն երախտիս համարեալ՝ կրկին զՅունանն ձեռնազրել և տուեալ նոյս զայր յաշխարհ իւր։ Եւ էր զործն արտաքոյ սուրբ զրոց, այլ սակայն կարիս վախոտութեանն զայս առնել հաւանեցոց, եւ ինքն դառնայր զայր հասանէր յաշխարհս իւր։

12. Բն. Ներսմերհա: 15. Բն. Տանուտէր: 14. Պատմ. Ազ. գիրք 4. գլ. Ը. (8): 15. Բ. Թագաւորութիւնս: 16. Բն. տանս: 17. Բն. Ապակասի: Համամ: 18. Բն. Նորոգնաց:

19. Ա. բագրատութիւն: 20. Բն. Թագաւորութիւն: 21. Բն. մեծ: 22. Բն. Ապակասի: 23. Բն. Կասաւորութիւն եղեւ պարտապան արձան եղօրօն: 24. Բն. յանձին: 25. Բն. կարուս: 26. Բն. առատազուարթ: 27. Բն. հայաստանայսն:

28. Բ. սուրբ: Ա. օրինակում միմէն Տէր սիմէօն ամն հիւ. 21): 29. Այս այս տէր Դաւիթը Թերես շվոթուած մի միւ Դաւիթի նատ որը վկնի Գագիկից է զրուած. Երկրորդ Խմբի օրինակները մէկը միւի տեղ ան դասել. Երկաթագիր օրինակի նորոգած Թերթում այսպէս էր դասաւորուած. միջնորդ Երկրորդ Խմբ. օր. Ամի. տէր Դաւիթի կապահակայտէր Սահակ Մնձկունէից, տէր Գագիկ զարդանաց. Տէր Դաւիթիթ Փափսոսյ վանաց որեւ ճնշուարի յւսանիայէ կաթուղիկոսէն Հայոց:

Կը Ներսմերհա երկաթ. օր Պատմ. Ազ. գիրք. Ա. գլ. Է. Ներսմերհա նայ սուրբ ուխտն, որ այժմ կոչ չըվշոփէ. Թեղուղոյի մեջ աղաւազ. Մերսմերհ նաս : Այս մասին ուրիշ անգամ։

5. Ա. գէորգայ: Բ. գէորգայ: 6. Ա. համամա: 7. Ա. գէրէ փրկութեան: 8. Աբ. ծեռատրեալ: 9. աղմատմնպէ. Թերես իւղով։

— Տէր Պատիթ⁵⁰ ամս • Զ. (6) յառաջնորդութենէ Փառհսոսէ⁵¹ վանաց.

— Տէր Սահակ ամս • Ժ. (18) յեպիսկոպոսութենէն Արքակունէից⁵²

— Տէր Գաղիկ ամս • Ժ. (14) յեպիսկոպոսութենէն Գարդմանայ սորա⁵³ չորրորդ առմին լցաւ թիւս հայոց • Ն. ⁵⁴ (400):

— Տէր Դաւիթ ամս • Լ. (7) յեպիսկոպոսութենէն յապաղակայ:⁵⁵

— Տէր Պատիթ⁵⁶ ամս • Զ. (6) սա առ⁵⁷ ձեռնադրութիւն յԱնանիայէ հայոց կաթուղիկոսէաց:

• Ա. «Եւ յետ վաղճանելոյ հայրապետին հայոց տեսան գերզայ՝ սովորութիւն կալաւ և գիւրագարձ զեղեալսն՝ իբրև վաղճաներ Յունանն ձեռնադրէին նոյն սովորութեամբ զհարազատ նորին զոմն Արմէսն, և ի նմանէ Պատիթ, և ի նմանէ Սահակ, և ի նմանէ Գաղիկ, առ որ¹⁰ այժմ բանս է, տեսեալ ապօստամբութեամբ զամա • Կ. Ժ. (69) և զժամանակս հայրապետաց հնդից¹¹ մինչեւ ի մեր նըռուաստութիւնս: Եւ զայսոսիկ ծափիւ, ¹² և հաւասարի քննութեամբ տեղեկացեալ ուրախ լինէաք:

Անանիայից ձեռնադրուող Պատիթից յետոյ Աղուանից պատմութեանց թէ երկաթազիր և թէ բոլորազիր օրինակուում յիշատակուում են միայն երկու կաթուղիկոսներ. «Տէր Պիկնաց»¹ ամս • Ժ. (18) յեպիսկոպոսութենէն գարգմանայ:

Տէր Մովսէս ամս • Զ. (6) յառաջնորդութենէ Փառհսոսայ վանաց:²

Օրբելեանի քաղուածքը • Լ. Հատուածից է՝ «Եւ այս այսովէս եկաց միաբանութեամբ զամս 137 յաւուրս չորեքտասան կաթողիկոսաց հայոց մինչ ի Տէր Գէորգ գառնեցին: Ապա ի գալն Բուղայի ամիրայի ի հայս, եւ ի գերելն զՏէր գէորգ կաթողիկոս եղեւ դառն և ազգի ազգի պղտորումն յաշխարհիս հայոց եւ Աղուանից. և փախեաւ զբան եպիսկոպոսն Տեառն Գէորգայ եւ եկն յԱղուանս Յօնան անուն: Եւ եղեւ վախճանել արքեպիսկոպոսին Աղուանից և կաթողիկոսն էր ի գերութեան: Ապա միամտութիւն համարելով նմա՝ ժողովեալ ձեռնադրէին զզրան եպիսկոպոսն զՅօնան կաթողիկոս Աղուանից: Խոկ ի գարձին Գէորգայ ի գերութենէ ի ձեռն համամայ՝ թագաւորի

50. Բ. Փառհսոսոյ: Ն. Փառհսոսայ: 51. Բ. Մ'նձկունենից: 52. Բ. եւ սորա: 53. Բ. Դ. Շ. 54. Ան. կապաղակայ: 55. Իւ. պակասիք այս մե Դավիթը թերեւս կրկնութիւն լիր: 56. Ն. առնուս ... Պատմ. Աղ. գիրք -գ. զւ. Իր. (25: :

4. Խ. Տէր Պետրոս: 2. երկաթագիր օրինակում սկիզբն է առնում զըշագիր յիշատակարանը. իսկ բոլորազրում վասըն կոտորածին որ ի կողմանս Խաչենոյ եւ վասն բարեպաշտ իշխանին ձալալիք:

Աղուանից, տեսանէ զՅօնան՝ նոցին արքեպիսկոպոս, և հրամայէ կողոպտել ի բաց զզկեստ և զձեւ կաթողիկոսութեանն. վասն որոյ առաջի անկեալ Համամայ հայցէր զներումն: Լուեալ ապա նմա վասն մեծի երախտեացն, և կրկին ձեռնադրէ զՅօնանն արքեպիսկոպոս Աղուանից. և թողեալ անդէն զնայ յիւր սեպհական աթոռնու:

Խոկ • Լ. Հատուածից արած քաղուածքն է՝

«Խոկ ի վախճանելն Գէորգեայ, վասն գառն և ազգի ազգի անցից աշխարհիս յիսմայէլականացն. ոչ կարացին հասանել առ Հայրապետքն հայոց յԱղուանից, նմանապէս եւ անփոյթ լինէր ի հայոց կաթողիկոսացն. զի ամենայն ոք միայն զանձին հնարս հայթայթէր զերծման յիսմայէլական սրոյն: Ձեռնադրեն ապա կաթողիկոս Աղուանից յետ Յօնանու զնորին հարազատն Արմէսն անուն, ապա զՊաղիկս զայս, որ լինէր ամք 60 ինքնաձեռն և անձնիշխան թերակատար օծման նոցա: Ահա զայս ամենայն ընթերցեալ եւ իմացեալ եւ ծանուցեալ կաթողիկոսին Անանիայի, և այսու բանիւք սա լուցուցեալ զզրաբան բերանս խոտորախօս արանց, և պապանձեցուցեալ զեղու փառորսակ և անձնահամարդիկան՝ յամօթ արար զամեննեսեանս»:

Հատարակելով Գիլք թղթոցի Անանիա

10. Աք. որ առ այժմ բանս է: 11. Ա. Շակից: 12. Ա. Ծըդիք:

կաթողիկոսի կոնդակի այն մասը, որը քաղաքացիների կողուանից Պատմութիւնից, առանք որ Անանիա կաթողիկոսը օգտուել է յիշեալ պատմութեան Առաջին պրեի 9, 11 և 14 Բ. պրեի 47 և 48 և Դ. պրեի, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 21 և 23 զատիներից: Համեմատելով օգտուած աղբիւրները կոնդակի հասուածների հետ՝ նկատելի եղաւ որ ներկայում մեր ձեռքը հասած Ազուանից պատմութեան օրինակը Անանիայի ժամանակի 949 թուականի օրինակից շատ չի տարբերուում այնպէս որ այն ժամանակուաց խմբագրութիւնը համարեաթէ մեծաւ մասամբ հասել է մեզ անփոփոխ: Խոկ այն փոփոխութիւնները, յաւելուածները և տարբերութիւնները որը նկատելի է երկու խմբերի մէջ, ես և այն աղբիւրները, որից հիւսել է Ազուանից պատմիքը իւր պատմագրութիւնը, կը հրատարակենք առաջիկայ համարում:

Խ. Վ.



ՄԱՏԵՆԱԼՈՅՈՒԹԻՒՆ.

Յովհաննէս Մայլասեան. Երդում: Վէպ. Թիֆլիս, 1896 թ. գիւղ 40 կ: Կւելորդ չենք համարում երբեմն երբեմն ասելու և գանգատուելու, որ մեր հասարակութիւնը զիրք չէ կարգում: Հասարակութիւն ասելով մենք հասկանում ենք այս դեպքում այն բոլոր անհամաններին, որոնք կարդալ գրել գիտեն: Զի կարգում ոչ միայն ժողովուրդը, զիւղացին, հակամ արհեստաւորը, այլ և քաղաքացին, հակամ րուսարը ինտելիգենտը: Աչ մեծն է կարգում ոչ փոքրը, ոչ երիտասարդը և ոչ օրիորդը: Զի սիրում կարդալ հայրը ընդհանրապէս իսկ նախ և առաջ նա սէր չունի հայերէն զրքեր կարգալու: Խնչիցն է առաջ զալիս այդ երեսութը: Պատճառներ շատ կան, զիսաւոր պատճառներն են, մեր կարծիքով, նախ որ մենք չենք աշխատում մեր երիտասարդների սրաերի մէջ փոքրուց սերմաննել ընթերցասիրութեան սերմերը. երկրորդը որ մեր «ամենասիրելի» հեղինակների պրուածքները թանգ են և անդինակների պրուածքները թանգ են և անմաշելի ժողովրդի համար (այսպէս՝ Խ. Շարովանի Քաֆֆու, Պուշենցի), Ա. Պատրովեանի համար, և այլ հեղինակների պրուածքները). վերջապէս մենք իսկապէս ասած լաւ պրերէլ չունենք:

Ա էսլը պրականութեան այն ձեն է, որ ամենից շատ և սիրով է կարգացուում ամենաեղի Բայց եթէ լաւ հետեւէք մեր զրականութեանը, մանաւանդ առանձին զրքերով հրատարակուած պրուածքներին, գուշ իսկոյն կրտեանէք, քանի տոկոս են ներկայացնում մեր վիպական պրուածքները և մանաւանդ ինքնուրոյն վեպերը: Խոկ քանի՞ քանիսները այդ վեպերից ու պատկերներից անպէտք զրուածքները են, որոնց ընթերցումը ժամանակի կորուսաւ է:

Այսու ամենայնիւ ամեն մի նոր վիպական պրուածքի լոյս տեսնելը մեզ ուրախացնում է. մենք ամենայն սիրով սկսում ենք կարգալ այն յուսովի որ գուցէ հեղինակը մի անոր խօսքը կասէ, մի նոր շրջան կը բանայ մեր զրականութեան մէջ. բայց շատ սակաւ է պատահում, որ մենք յուսախար չլինինք: Այժմ էլ մեր առաջը մի նոր վեպ է զրած, բայց սա աւելի պատկերներ են իրական կեանքից, քան թէ վեպ, որովհետեւ հեղինակը վեպի մէջ վիպական մասը բոլորովին չի մուցըել: Խացի զրանից վեպ, ոսման, ասելով մենք հասկանում ենք այնպիսի մի զեղարուեստական պրուածք, որից մենք ծանօթանում ենք մի կամ մի քանի հերոսների կեանքի բոլոր կողմերի հետ: Այդ կողմից էլ Յ. Մալիսասեանի մեր ձեռքբխն եղած և նոր լոյս տեսած վեպը մեզ չի դռհացնում: Մենք գիտենք մի այնպիսի մի զեղարուեստական պրուածք, որից մենք ծանօթանում ենք մի կամ քանի հերոսների կեանքի բոլոր կողմերի հետ: Այդ կողմից էլ Յ. Մալիսասեանի մեր ձեռքբխն եղած և նոր լոյս տեսած վեպը մեզ չի դռհացնում: Մենք գիտենք մի այն, որ Համալքալաք գաւառի Մարկոս, Սարդինի և Յարութիւն զիւղացիները ու նրանց մօտիկ մարդիկի ի՞նչպէս են միմեանցից վրէժ հանում ինչ միջոցներով են կռուում միմեանց հետ և պաշտպանուում միմեանցից. զուցի մի բան էլ աւելի ենք իմանում: Բայց գա բաւական չէ մեզ համար. մեզ պէտք են նրանց աշխարհահայեցողութիւնները, որոնք պատկանում են այդ վեպի մէջ:

Ա էպի: կմախքը սա է. Յարութիւնը ուզումէ Մարկոսից վրէժ առնել. Սահակը —սուտ երգում է ուտում ու յետոց զիջարով ուզումէ զնալ ամեն բան յայտնել գատարանում բայց Յարութիւնը վախենալով, որ իր բոլոր վիատութիւնները դրանից կարող են բացուիլ՝ խեղզում է Սահակին:

Գիւղացիների պատկերներ և մի քանի տեսարանները —շատ յաջող են զուրս բերուած: Երեսում է, որ հեղինակը լաւ և ի մօտոյ ծանօթ է առհամարակ զիւղական կեանքին և մասնաւորապէս այդ գաւառի կեանքին, երեսում է, որ նա շատ էլ սիրում է այդ կեանքը. զուրս բերուած տիպերը և երեսուները նրա սրախն շատ մօտ են: Բայց